ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԻ ԱՌԹԻՎ

ԳԱՐՍԵՎԱՆ ՇԱՌՈՅԱՆ

Սովետական Հայաստանի գյուղացիության պատմությանը նվիրված իր արժեքավոր աշխատության մեջ Վ. Ղազախեցյանը շոշափում է նաև ագրարային վերափոխումների պատմությանը վերաբերող հարցերը[1]։ Նախ նկատենք, որ Վ. Ղազախեցյանի մենագրության ներածության ու սկզբնաղբյուրների տեսության բաժնում և այլուր շրջանցված է 1920-ական թվականներին հանրապետության պաշտոնական որոշ շրջաններում տարածված ու վավերագրերում տեղ գտած այն անհիմն վարկածը, ըստ որի Սովետական Հայաստանում հողազուրկ և սակավահող գյուղացիությունը հողաբաժնով բավարարվել է միջակ գյուղացիության հաշվին։ Եթե 1920-ական թվականներին հողային հարաբերությունները կարգավորվեին ի վնաս միջակ գյուղացիության, ապա համոզված կարող ենք ասել, որ այն երեսը շուռ կտար սովետական իշխանությունից։ Բարեբախտաբար այդպես չի եղել։ Երևույթի խոր ու համակողմանի ուսումնասիրությունը ցույց է տալիս հակառակը։ Հայաստանում 1920-ական թվականներին տեղի ունեցած սովետական ագրարային-հողային վերափոխումների ընթացքում միջակ գյուղացիների հողաբաժինը ոչ միայն չի պակասել, այլև ավելացել է։ Հանրապետության տասնյակ հազարավոր հողազուրկ ու սակավահող չքավոր գյուղացիներ, ինչպես և միջակ գյուղացիության մի զգալի մասը հողաբաժնով բավարարվել են աշխարհիկ և հոգևոր կալվածատերերից բռնագրավված, կուլակ-ունևոր տարրերի ձեռքում կուտակված, ինչպես նաև պետական ֆոնդի և լքյալ գյուղերի հողերի հաշվին։

Ինչպես տեսնում ենք, խնդիրը բավականին լուրջ է, և մենագրության հեղինակը պարտավոր էր անդրադառնալ այդ հարցին, ցույց տար իր վերաբերմունքը, և ոչ թե հարևանցիորեն անցներ դրա կողքով։ Այդ խնդրի ճիշտ լուսաբանումից են կախված նաև մեր հանրապետության ագրարային հարաբերությունների 1920-ական թվականների պատմության ոչ պակաս կարևորություն ունեցող այլ պրոբլեմների ճիշտ և օբյեկտիվ մեկնաբանումներն ու գնահատումը։

Վ. Ղազախեցյանը ոչ միայն շրջանցել է «միջակի հաշվին» հողահավասարեցման հակապատմական վարկածը, այլև ինքն իր հերթին «շրջանառության մեջ» է դրել սխալ տվյալներ։ Խրախուսելի է, երբ նա համաձայն է մեր այն տեսակետի հետ, ըստ որի Սովետական Հայաստանի գյուղական բնակ-

---

1 Վ. Ն. Ղազախեցյան, *Սովետական Հայաստանի գյուղացիության պատմությունը 1920—1929 թթ.*, Երևան, 1975։

չության մեկ շնչին հասնող հողաբաժինը 1920-ական թվականներին ավելին է եղել, քան պատերազմից առաջ։ Դրանով նա փաստորեն մերժում է Ս. Շաումյանի և ուրիշների աշխատություններում տեղ գտած սխալ թեզն այն մասին, թե, իբր, Հայաստանի գյուղացիության մեկ շնչին 1914 թ. միջինը ընկնում էր 0,77 դեսյատին պիտանի հող, իսկ 1920-ական թվականների կեսերին՝ 0,5 դեսյատին։ Դրան հակառակ Վ. Ղազախեցյանը գտնում է, որ 1925—1926 թթ. Հայաստանում մեկ շնչին հասնող հողաբաժինը ոչ թե կես, այլ «մոտ 0,9 դեսյատին էր, կամ նախասովետական ժամանակաշրջանի համեմատությամբ ավելացել էր 0,11 դեսյատինով»[2]։ Մոտենալով պատմական ճշմարտությանը, Վ. Ղազախեցյանը, սակայն, մնում է կես ճանապարհին։ Նա միաժամանակ թույլ է տալիս անճշտություն՝ նվազեցնում է գյուղացու հողաբաժնի չափը։ Նա գրում է, որ Սովետական Հայաստանում «գյուղացիական բնակչության յուրաքանչյուր շնչին միջին հաշվով հասնում էր 0,88 դեսյատին պիտանի հող (վարելահող, խոտհարք, այգի և տնատեղ)»[3]։ Այդ թիվը սխալ է։ Նշված չորս հողատեսքերը միասին վերցրած գյուղացու շնչապատկան հողաբաժնի չափը կազմել է 1,02 դեսյատին (միայն վարելահողը՝ 0,9 դեսյատին)։ Դա նշանակում է, որ նախապատերազմյանի համեմատությամբ 1920-ական թվականների կեսերին Սովետական Հայաստանում գյուղացու շնչապատկան հողաբաժինը ավելացել էր ոչ թե 0,11, այլ՝ 0,25 դեսյատինով։ Այլ կերպ ասած՝ յուրաքանչյուր գյուղացու շնչապատկան հողաբաժնի չափը կրկնակի անգամ ավելին էր, քան 1920-ական թվականներին հանրապետության պաշտոնական որոշ շրջաններում գրում ու խոսում էին այդ մասին[4]։

Վ. Ղազախեցյանը բանավեճի առարկա է դարձրել կալվածատիրության վերացման և կուլակության հողաթափման բնութագրման հարցը։ Նա սխալվում է, երբ վերապահորեն է խոսում, լրիվ չի ընդունում, որ Հայհեղկոմի 1920 թ. դեկտեմբերի 28-ի հողերի պետականացման վերաբերյալ դեկրետով Հայաստանում ևս կիրառվել է բուրժուա-դեմոկրատական հեղափոխության միջոցառում՝ վերացվել է ֆեոդալիզմի մնացուկ աշխարհիկ և հոգևոր հողատիրությունը։ Վ. Ղազախեցյանը գտնում է, որ ֆեոդալական հողատիրության վերացումը Հայաստանում էական դեր չի խաղացել ագրարային վերափոխումների մեջ, քանի որ «ֆեոդալական հողատիրապետությունը Հայաստանում մեծ տարածում չուներ»[5]։ Մենագրության հեղինակը մի պահ մոռանում է, որ բանն այն չէր, որ Ռուսաստանի համեմատ ֆեոդալական հողատիրությունը Հայաստանում մեծ տարածում չուներ, այլ այն, որ այդպիսին կար ու սովետական իշխանությունը եկավ և այն հիմքից վերացրեց։ Էականը երևույթի սոցիալ-քաղաքական կողմն էր։ Այստեղ տեղին է վերհիշել Վ. Ի. Լենինի հետևյալ խոսքերը, որ նա ասում էր բոլշևիկների կուսակցության VII կոնֆերանսում (1917 թ. ապրիլ)։ «Բանն այն չէ,— ասում էր Վ. Ի. Լենինը,— գյուղացիները քի՞չ հող ունեն, թե՞ ոչ», մենք պետք է հանդես գանք «կորշի ճորտատիրությունը» պահանջով[6]։ Սովետների համառուսաստանյան II հա-

---

2 Նույն տեղում, էջ 156։

3 Նույն տեղում։

4 Այդ մասին հանգամանորեն տե՛ս. Գ. Վ. Շ ա ռ ո յ ա ն, Գյուղի ներքին հողաբաժանությունը Սովետական Հայաստանում (1921—1929 թթ.), Երևան, 1965, էջ 70—82։

5 Վ. Ղ ա զ ա խ ե ց յ ա ն, նշվ. աշխ., էջ 18։

6 Վ. Ի. Լ ե ն ի ն, Երկեր, հ. 24, էջ 347։

մագումարում նա նշում էր. «էականն այն է, որ գյուղացիությունն հաստատպես համոզվի, որ գյուղում այլևս կալվածատեր չկա»[7]։ Հետևաբար, սակավահող Հայաստանում սովետական կարգերի հաստատմամբ ֆեոդալիզմի մնացուկ կալվածատիրական 200 հազար դեսյատին հողատարածության բռնագրավումն ու անհատույց աշխատավոր գյուղացիությանը հանձնելը, առանց ավելորդ վերապահության, պետք է դիտել որպես բուրժուա-դեմոկրատական հեղափոխության միջոցառում։ Բացի դրանից, որպես լրացուցիչ փաստարկ, վերհիշենք հայ գյուղացիության պայքարի պատմության մի կարևոր դրվագ։ Սկսած 1917 թ. մարտից մինչև 1920 թ. ներառյալ, մոտ չորս տարի անընդմեջ, ագրարային շարժումը Հայաստանում գնալով ուժեղանում էր։ Այս հանգամանքը ցույց է տալիս շարժման գյուղացիական՝ բուրժուա-դեմոկրատական էտապն ու բնույթը, մի շարժում, որը պսակվեց հաղթանակով միայն Հայաստանում սովետական կարգերի հաստատմամբ։ Հենց ինքը՝ Վ. Ղազախեցյանը, իր մենագրության 122-րդ էջում գրել է. «Սովետական Հայաստանի առաջին ագրարային վերափոխումների մեջ կարևոր տեղ են գրավում կալվածատիրական հողերի բռնագրավումն ու բաժանումը»։ Ինչպես տեսնում ենք, Վ. Ղազախեցյանն այս հարցում ընկել է երկընտրանքի մեջ և, ըստ էության, ինքն իրեն հակասում է։

Վ. Ղազախեցյանը, մեր կարծիքով, սխալ է թույլ տալիս նաև, այսպես կոչված, կուլակության մասնակի «ունեզրկման» հարցը քննելիս։ Մի՞թե պատմական իրողություն չէ այն փաստը, որ Սովետական Հայաստանում ևս հողի ազգայնացման, այն պետական-համաժողովրդական սեփականություն դարձնելու սկզբունքը 1921—1922 թթ. վարչական կարգով իրականացնելու ընթացքում կուլակությունը հողաթափ էր լինում։ Մի՞թե այդ եղանակով կուլակությունը Հայաստանում ևս, ինչպես Սովետական Ռուսաստանում էր 1918 թ., չզրկվեց նախասովետական ժամանակներում, հատկապես դաշնակցության տիրապետության տարիներին, տարբեր ճանապարհներով ձեռք բերած ավելցուկ հողատարածություններից։ Այդ փաստը Սովետական Հայաստանի ագրարային հարաբերությունների պատմությունից ջնջել հնարավոր չէ, քանի որ պատմական իրողությունը ամեն ուժից վեր է։

Իսկ ո՞րն է պատմական իրողությունը. ա) հրատարակվել են փաստաթղթերի ժողովածուներ, որոնցում զետեղված վավերագրերը ցույց են տալիս, թե կուլակները 1917—1920 թթ., հողագործության համար պիտանի, լավորակ հողերն ինչպիսի խարդախ ճանապարհներով էին իրենց ձեռքում կենտրոնացնում[8]։ բ) Այդ մասին են գրել մի շարք հետազոտողներ[9]։ գ) ՀՍՍՀ պետական պատմական արխիվում պահպանվել են ժամանակի տարբեր բնույթի վավերագրեր ու այլ նյութեր։

Այստեղ հարկ ենք համարում ընդգծել, որ 1917—1920 թթ. Հայաստանի կուլակության ձեռքում հողամասերը կուտակվում էին հիմնականում երեք ճանապարհով. ա) կուլակն օգտվելով համագյուղացու օրհասական վիճակից,

---

7 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 26, էջ 311։

8 Տես «Առաջին-մասսայական-հեղափոխական շարժումները Հայաստանում», Երևան, 1932, «Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», Երևան, 1960։

9 Վ. Միքայելյան, Հայաստանի գյուղացիությունը սովետական իշխանության համար մղված պայքարի ժամանակաշրջանում (1917—1920 թթ.), Երևան, 1960։

չնչին վարձատրությամբ գնում էր նրա հողաբաժինը։ բ) Գյուղ-համայնքների կողմից կալվածատերերից ու կապալառուներից գրավված վարելահողերի և խոտհարքի առյուծի բաժինն ընկնում էր գյուղի կուլակ-զոռբայի ձեռքը։ գ) Այն սահմանափակ թվով գյուղերում, որտեղ կատարվում էր համայնական հողերի վերաբաժանում, լավորակ հողերն անցնում էին կուլակներին՝ վերջիններիս զանազան մեքենայությունների շնորհիվ։

Հայաստանում սովետական կարգերի հաստատման նախօրյակին կալվածատիրության դեմ համագյուղացիական պայքարից բացի, չքավոր, հողազուրկ ու սակավահող գյուղացիները պայքարում էին նաև կուլակի ու հողն իր ձեռքում կենտրոնացրած գյուղի զոռբայի դեմ։

Արխիվային բազմաքանակ վկայություններից այստեղ հիշատակենք միայն երեքը. ա) 1920 թ. ապրիլի 24-ին Էջմիածնի գավառի համայնական վարչությունը հայտնում էր, որ «Տարիներով հողազուրկ գյուղացիները պահանջում են հող և հողի հավասարեցում, և արդեն իրենք սկսել են այդ գործը, որը առաջ է բերել ամեն մի գյուղում երկու հոսանք. մեկը՝ որից հող պիտի կտրվի, իսկ մյուսը՝ որոնց պիտի հող տրվի»[10]։ Ընդ որում, նույն վարչությունը դաշնակցական կառավարությանը նախազգուշացնում էր, որ եթե մենք չմիջամտենք, ապա գյուղի ճնշվածներն իրենք «կռվով ու դավով կլուծեն այդ և նման շատ հարցեր» իրենց եղանակով՝ «հեղափոխական ճանապարհով»[11]։ բ) 1920 թ. հունվարին վերաբերող պաշտոնական զեկուցագրերից մեկում Նոր-Բայազետի գավառի մասին ասված է՝ «գավառի ամենացավոտ հարցերից մեկն է հողային հարցը։ Հողն այստեղ... կենտրոնացված է... հարուստների ձեռքում»[12]։ գ) Էջմիածնի գավառի Աղավնատուն գյուղի աշխատավոր գյուղացիության լիազորները 1919 թ. նոյեմբերի 25-ին դաշնակցական կուսակցության Էջմիածնի շրջանային կոմիտեին ներկայացնում են մի դիմում, որում ասված է՝ «Պատիվ ունենք հայտնելու կոմիտեիդ, որ մեր գյուղի վարելահողերի մեծ մասը գտնվում է գյուղի մի քանի վաշխառուների ձեռքում, իսկ մնացած 2/3-ը՝ բնակչության, գլխավորապես աղքատները բոլորովին հողազուրկ են» և խնդրում էին օգնել իրենց՝ արդար կեսպով կատարելու հողաբաժանություն[13]։

Բերված վկայությունները բազմանշանակալից են։ Միայն կամենում ենք կրկին նշել, որ մինչև ագրարային հարաբերությունների սովետական վերափոխումների սկսվելը, Հայաստանի գյուղերում հողագործության համար պիտանի հողերի մի շոշափելի մասը կենտրոնացված է եղել կուլակ-վաշխառուական տարրերի ձեռքերում։

Մենք դիտավորյալ կանգ առանք Հայաստանում սովետական կարգերի հաստատման նախօրյակի ագրարային հարաբերությունների որոշ հարցերի վրա, որպեսզի արդեն սովետական տարիներին տեղի ունեցած վերափոխումների գնահատմանը կարողանանք տալ պատճառաբանված պատասխան։

Այժմ անդրադառնանք սովետական իշխանության տարիներին կուլակության հողային ունեզրկման հարցին։

---

10 ՀՍՍՀ պետական կենտրոնական պատմական արխիվ (այսուհետև՝ ՀՍՍՀ ՊԿՊԱ), ֆ. 201, ց. 1, գ. 255, թ. 74։

11 Նույն տեղում։

12 Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 134, թ. 64։

13 Նույն տեղում, ֆ. 214, ց. 1, գ. 5, թ. 50։

Մեր կարծիքով, Վ. Ղազախեցյանը սխալվում է, երբ կուլակությունից բռնագրավված ավելցուկ հողերը հողազուրկ աշխատավոր գյուղացիության օգտագործմանը հանձնելը չի դիտում որպես հեղափոխական միջոցառում։ Այդ ինչպես է, որ մենագրության հեղինակը նույն երևույթը, նույն միջոցառումը Ռուսաստանում համարում է հեղափոխական, իսկ Հայաստանում՝ ոչ։

Բերենք երեք օրինակ. ա) Ա. Մռավյանը 1921 թ. դեկտեմբերին հրապարակած իր «Մի հիմնական և հրատապ հարցի մասին» խորագրով հոդվածում գրում էր, որ Լոռվա գավառում «գյուղացիք իրենք գրավել են կալվածատերերի ու համփաների (կուլակների) հողերը ու իրենց հասկացած ձևով բաժանել»[14]; բ) 1922 թ. նոյեմբերին սովետների Ալեքսանդրապոլի գավառային II համագումարում, Մոլլա-Գյոքչայի շրջանի պատգամավորն իր ելույթում ասում է, որ իրենց մոտ հողային հարցը «շատ էր սրվել, կային կուլակներ, որոնք ունեին 60—70 դեսյատին հող և շահագործում էին աղքատ գյուղացիներին։ Այսօր շնորհիվ խորհրդային իշխանության, կուլակները տապալված են և հողը պատկանում է համայնքին»[15]; գ) Կոտայքի շրջանի Թեշրաբակ (Զորաղբյուր) գյուղից հաղորդում էին, որ՝ «գյուղի բերրի հողը, որ գտնվում էր մի 10 կուլակների ձեռքին, այսօր հավասարապես բաժանված է շնչերի վրա»[16]։

Ինչ անուն տալ վերևում հիշատակված փաստերին։ Դրանք, արդյոք, չեն հաստատում այն թեզը, որ 1921—1922 թթ. Սովետական Հայաստանում միաժամանակ տեղի էր ունենում և՛ կալվածատիրության վերացում, և՛ կուլակության հողային ունեզրկում։ Այսինքն, կուլակին, որպես համայնքի անդամի, տրվում էր հողաբաժին, իսկ նրա մոտ եղած ավելցուկ հողերը բռնագրավվում էին հօգուտ սակավահող գյուղացիների։

Պատմական իրողությունն իր փաստական հագեցվածությամբ այնքան հարուստ է ու ակնհայտ, որ հենց ինքը՝ մենագրության հեղինակը, մոռանալով թե ինչ է ասել իր աշխատության 18—19-րդ էջերում, հետո, առանց որևէ վերապահության ընդունում է, որ Նոր-Բայազետի գավառում սովետական առաջին ագրարային վերափոխումներին «գյուղի շքավոր ու միջակ դասակարգը սիրով ընդառաջ է գնում», իսկ կուլակները և նախկին կառավարությունների պաշտոնյաները, որոնք իրենց ձեռքն էին գցել լավորակ ու շատ հողամասեր, ոչ մի կերպ չէին հաշտվում այն մտքի հետ, որ նրանցից նման հողամասերը պիտի վերցվեն ու հանձնվեն աշխատավորներին[17]։ Ապա մի քանի էջ անց Վ. Ղազախեցյանը գրում է, որ Սովետական Հայաստանում «հողաբաժանության ժամանակ ամենուրեք կուլակներից վերցվեց նորմայից ավելի հողը»[18]։

Այժմ մնում է պատասխանել այն հարցին, թե կուլակության հողային (և մասամբ արտադրական) ունեզրկումը կարելի՞ է համարել սոցիալիստական հեղափոխության միջոցառում, թե ոչ։ Միջոցառում, որը 1921—1922 թթ. կիրառվում էր հաղթանակած Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության ծնունդ հանդիսացող Սովետական Հայաստանում, կոմունիստական

---

14 «Խորհրդային Հայաստան», 13. XII. 1921։

15 ՍՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի արխիվ (այսուհետև՝ ՄԼԻ արխիվ), ֆ. 1, ց. 1, գ. 180ա, թ. 124։

16 «Խորհրդային Հայաստան», 3. XI. 1921։

17 Վ. Ղազախեցյան, նշվ. աշխ., էջ 123։

18 Նույն տեղում, էջ 133—134։

կուսակցության ղեկավարությամբ կազմակերպված հեղկոմների, սովետների ու հողկոմների կողմից։ Մեր կարծիքով, այդ հարցին կարելի է տալ դրական պատասխան, անկախ այն բանից, թե այդ հեղափոխական միջոցառումն ինչ ձև ու ծավալ է ունեցել։ Մենագրության հեղինակն առարկելով մեզ, հարցին տալիս է բացասական պատասխան։ «Սովետական Հայաստանի 1921—22 թթ. ագրարային վերափոխումների փորձը,— գրում է նա,— բավարար տվյալներ չի տալիս գյուղում սոցիալիստական հեղափոխության միջոցառումների մասին խոսելու համար»[19]։ Նման թեզը պետք է հիմնավորել, փաստարկել, մի բան, որ Վ. Ղազախեցյանը չի անում։

Վ. Ղազախեցյանը սխալվում է, երբ խոսելով 1920-ական թվականների գյուղի ներքին հողաբաժանության հարցի մասին, առավելությունը տալիս է հողի սոսկ հավասարեցման եղանակին, արժեքազրկելով հողերի ընդհանուր վերաբաժանման եղանակը[20]։ Մենք չենք բացասում հողի սոսկ հավասարեցման տնտեսական ժամանակավոր դրական դերը այսպես կոչված «կայուն հողօգտագործության» ասպարեզում։ Բայց հօգուտ աշխատավոր գյուղացիության շահերի, առավելությունը պետք է տալ հողերի ընդհանուր վերաբաժանմանը[21]։

Չէ՞ որ խոսքը վերաբերում է նախ և առաջ հողային հարցի արդար լուծմանը պրակտիկայում։ Հարցը շատ պարզ է ու որոշակի։ Հողազուրկ և սակավահող աշխատավոր գյուղացիության համար ո՞ր եղանակն էր շահավետ. «հողի սոսկ հավասարեցո՞ւմը», թե՞ «ընդհանուր վերաբաժանումը»։

1921—1927 թթ. Սովետական Հայաստանի գյուղերում ամենուրեք սովորական երևույթ էր, երբ հողազուրկ ու սակավահող գյուղացիությունը պայքարում էր կուլակ-ունևոր տարրերի դեմ՝ հանուն հողերի ընդհանուր և հավասարար բաժանման։ Այդ պայքարը գնալով սրվել է։ Հարյուրավոր օրինակներից այստեղ հիշատակենք մի քանիսը. ա) ՀԿ(բ)Կ Լոռի-Փամբակի գավառային կոմիտեի քարտուղարը 1924 թ. ապրիլի 2-ին Կենտկոմին գրում էր, որ գավառի կյանքում ամենակարևոր խնդիրը հողային հարցն է։ Նա բերելով Ստեփանավանի շրջանի օրինակը, հաղորդում էր, որ այդ շրջանում կուլակությունը, որը մի ժամանակ իր ձեռքում կենտրոնացրել էր գյուղի լավագույն ու գյուղին մոտ ընկած հողերը, բացահայտորեն դեմ է դուրս գալիս հողերի ընդհանուր և հավասարար բաժանմանը[22]։ բ) Նույն գավառի հողբաժվարը 1924 թ. հունիսի 5-ին հանրապետության հողժողկոմատին գրում էր, որ հողերի «սոսկ հավասարեցման» եղանակը, որը «համարյա բխում է № 2631 շրջաբերականից, չի վերացնի գյուղերում հողերի բաշխման անարդարությունը», քանի որ «երկար տարիների ընթացքում ունևոր և ազդեցիկ գյուղացիք

---

19 Նույն տեղում, էջ 19։

20 Նույն տեղում, էջ 20։ Հողաբաժանության այդ երկու եղանակները թույլատրվում էր հանրապետության 1923 թ. հողային օրենսգրքով։ Սրա 91-րդ հոդվածում ասված է. «Համայնական կարգով հողօգտագործումն ունեցող հասարակությունների մեջ հողի հավասարար բաշխումը կատարվում է ընդհանուր վերաբաժանության կամ առանձին ծխերի հողաբաժինների հավելման ու կրճատման միջոցով» («ՀՍԽՀ դեկրետների և որոշումների հավաքածու», 1923, № 8, էջ 21—22)։

21 Գ. Շառոյան, նշվ. աշխ., էջ 31—45, 148—158։

22 Մկի արխիվ, ֆ. 1, ց. 3, գ. 245, թ. 18։

ձեռք են բերել հողի ամենալավ կտորները»[23]։ գ) «Խորհրդային Հայաստանը» 1923 թ. հունիսի 1-ին գրում էր, որ հողերի սոսկ հավասարեցման դեպքում հողաշատ գյուղացին ինքն է որոշում նախօրոք վերցնել «իր նաֆարապատական հողը», ապա թափել «այն կտորները, որոնք ինքն է ուզում»։

դ) Ռնդամալ գյուղում գյուղհողկոմը 1924 թ. սոսկ հավասարեցման եղանակով կատարում է գյուղի ներքին հողաբաժանությունը և այդ մասին իրազեկ դարձնում գյուղացիներին։ Սակայն գյուղի սակավահող չքավոր գյուղացիությունն ըմբոստանում է նման հողահավասարեցման դեմ, այն համարելով անարդարացի։ Ռնդամալում բարձրացված աղմուկը հասնում է Ախտա (շրջկենտրոն) ու Երևան։ Շրջկենտրոնից 1925 թ. փետրվարին ուղարկված հանձնաժողովը տեղում ստուգելով գործը, բացահայտում է լուրջ կեղծիքներ։ Ռնդամալի աշխատավոր գյուղացիության ընդհանուր ժողովը որոշում է բեկանել սոսկ հավասարեցմամբ կատարված հողաբաժանումը և կիրառել հողերի ընդհանուր ու հավասարար վերաբաժանում[24]։ ե) Նույնը տեղի է ունենում նաև Ալափարսում[25]։ զ) Ջոթուր գյուղից (այժմ Սարամեջ, Սպիտակի շրջան) 1925 թ. մարտին գրել են, որ գյուղում մի քանի անգամ կատարվել է հողահավասարեցում և միշտ էլ «հողազուրկ գյուղացին ստացել է ամենաանպետք հողերը», իսկ 1925 թ. կատարված հողերի ընդհանուր վերաբաժանմամբ Ջոթուրում գյուղացին առաջին անգամ էր տեսնում «արդարացի և հավասար հողաբաժանություն»[26]։ է) Ախտայի շրջհողբաժնի 1924 թ. զեկուցագրում նշված է, որ շրջանի շատ գյուղերում հողերի վերաբաժանման մասին որոշումն ընդունված է չքավորների ցանկությամբ[27]։ ը) ՀԿ(բ)Կ Լոռի-Փամբակի գավկոմը 1924 թ. Անդրերկրկոմին ներկայացրած զեկուցագրում նշում էր, որ Լոռի-Փամբակի գավառի մի շարք գյուղերում ներքին հողաբաժանության շուրջ գյուղացիների միջև սուր վեճեր են գնում. «չքավորները պահանջում են վերաբաժանում, իսկ կուլակները՝ հողահավասարեցում, քանի որ կուլակների ձեռքումն են գտնվում լավ հողամասերը»[28]։ թ) Նման երևույթի մասին է խոսում նաև ինքը՝ մենագրության հեղինակը։ Վկայակոչելով ՀԿ(բ)Կ Լոռի-Փամբակի Գավկոմի զեկուցագիրը, նա մեջբերում է կատարում այն մասին, որ գավառում գյուղի ներքին հողաբաժանության շուրջը «կոնֆլիկտներ» կան «կուլակների և չքավորների միջև»։ Այդ «կոնֆլիկտն» այն էր, որ «չցանկանալով զրկվել իրենց որակյալ հողամասերից, կուլակները վերաբաժանությանը չեն համաձայնվում և առաջարկում են միայն հավասարեցում»[29]։

Այսպիսով՝ Սովետական Հայաստանի գյուղերում ամենուրեք հողային հարցի արդար լուծման համար աշխատավոր գյուղացիությունն անհաշտ պայքարի մեջ էր լավորակ հողերն իրենց ձեռքում կենտրոնացրած կուլակ-ունևոր տարրերի դեմ։ Այս ամենից հետո չի արդարացվում Վ. Ղազախեցյանի փորձը՝ պաշտպանելու Ս. Շադունցի թեզն այն մասին, որ եթե մենք կիրառենք հողի

---

23 ՀՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՍՍՀ ՀՀՍՇՊԿԱ), ֆ. 123, ց. 1, գ. 1336, թ. 122։

24 Նույն տեղում, գ. 1359, թ. 23։

25 Նույն տեղում, գ. 1367, թ. 20։

26 «Մաճկալ», 22. III. 1925։

27 ՀՍՍՀ ՀՀՍՇՊԿԱ, ֆ. 133, ց. 1, գ. 780, թ. 67։

28 ՄԼԻ վրացական մասնաճյուղի արխիվ, ֆ. 13, ց. 1, գ. 599, թ. 27—28։

29 Վ. Ղ ա զ ա խ ե ց յ ա ն, նշվ. աշխ., էջ 135։

ընդհանուր վերաբաժանում և դրանով հողը «մեկից խլենք և մյուսին տանք», ապա դա նշանակում է «կողոպտել տնտեսությունը, մանավանդ, որ դա գնում է բացառապես ի վնաս միջակ տնտեսության»[30]։ Վ. Ղազախեցյանը հավանություն տալով Ս. Շադունցի այդ ոչ ճիշտ պատճառաբանությանը, իր կողմից ավելացնում է. «հողաբաժանության սոսկ հավասարեցման եղանակը ավելի շատ առավելություններ ուներ»[31], քան հողերի ընդհանուր ու հավասարար վերաբաժանումը։ Այնինչ մեջ բերված փաստերը վկայում են, որ հողի ընդհանուր վերաբաժանումը առավելություն ուներ հողի սոսկ հավասարեցման նկատմամբ։

Անհասկանալի է, թե ինչո՞ւ է Վ. Ղազախեցյանը գտնում, որ հանուն «կայուն հողօգտագործության» ավելի լավ էր լավորակ և աշխարհագրականորեն հարմար ընկած հողերը մնային գյուղի նախկին հողաշատ տարրերի ձեռքում, քան անցնեին սակավահող աշխատավոր գյուղացիության օգտագործմանը։ Հողերի «սոսկ հավասարեցման եղանակը,—շարունակում է պնդել Վ. Ղազախեցյանը,— ուներ էական առավելություններ»[32]։ Նա, ինչպես երևում է, մոռացել է նաև մեկ այլ կարևոր հանգամանք՝ լենինյան պահանջն այն մասին, որ պետք է պայքարել, որպեսզի իրագործվի հողի իսկական անցումը աշխատավոր գյուղացիության ձեռքը[33]։

Եվ որովհետև 1920-ական թվականների առաջին յոթ տարիներին գյուղի ներքին հողաբաժանության ժամանակ հողի սոսկ հավասարեցման ընթացքում Հայաստանի շատ գյուղերում հողազուրկ և հողասակավ գյուղացիներին բաժին ընկան վատորակ ու գյուղից հեռու ընկած հողամասերը, նրանցից շքավորներն առաջին հերթին (որոնք գյուղացիության մեջ կազմում էին մեծ ուժ) դժգոհ մնացին և մինչև կոլտնտեսային կարգերի հաղթանակը պայքարում էին հողի արդար բաժանման և օգտագործման համար։

Հողերի սոսկ հավասարեցման եղանակի կիրառման հետևանքով, ինչպես գրում էր հանրապետության հողժողկոմատն իր 1927—1928 թթ. հաշվետվության մեջ, «գյուղերում սմենալավ հողամասերը գտնվում են կուլակների և ունևորների ձեռքում»[34]։ Այդ է պատմական ճշմարտությունը, որը հաստատվում է նաև մենագրության հեղինակի բերած հետևյալ օրինակով։ 1928 թ. օգոստոսի 13-ին Հրազդանի շրջանի Քալարա (Ղուկասավան) գյուղի 45 շքավոր և 20 միջակ գյուղացիների միացյալ ժողովը որոշում է հողային օրգաններին խնդրել՝ իրենց գյուղում կատարել նոր հողաբաժանություն և ուղղել թույլ տրված սխալները։ «Հողային հանձնաժողովը գտավ,— գրում է Վ. Ղազախեցյանը,—որ գյուղացիների քննադատությունը ճիշտ է, և շտկեց թույլ տրված սխալները, շքավորների վատորակ հողաբաժինները փոխարինվեցին կուլակների լավորակ և մոտիկ հողաբաժիններով»[35]։

Վ. Ղազախեցյանը նաև չի ընդունում, որ հավասարար հողաբաժանման հետևանքով 1920-ական թվականներին Հայաստանում հողատիրապետման,

---

30 Նույն տեղում, էջ 135—136 (ընդգծումը մերն է—Գ. Շ.)։

31 Նույն տեղում, էջ 136։

32 Վ. Ղազախեցյան, նշվ. աշխ., էջ 20։

33 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 24, էջ 640։

34 «ՀՍԽՀ Հողագործության ժողովրդական կոմիսարիատի 1927—1928 թթ. գործունեությունը», Երևան, 1929, էջ 18։

35 Վ. Ղազախեցյան, նշվ. աշխ., էջ 194։

հողաապահովվածության առումով ամենուրեք «համատարած» միջակացում է տեղի ունեցել[36]։ Ինչպես կարելի է բացատրել այն իրողությունը, որ իրոք այդ տարիներին հողը, որպես կարևորագույն արտադրամիջոց, որպես հասարակության ամեն տեսակի նյութական բարիքների աղբյուր, հավասարությամբ չի անցել գյուղի բոլոր սոցիալական շերտերի աշխատավորական օգտագործմանը։ Եթե միայն վերցնենք հողի ապահովվածությունը, ապա այդ առումով հայկական գյուղը դառնում է միատեսակ՝ միջականանում է։ Գյուղացիական բոլոր տնտեսությունները (չհաշված հողազուրկ հայ գաղթականներին) հողի ունեցվածքով հասնում են մի մակարդակի՝ գյուղացիական մեկ ծխին միջինը բաժին է ընկնում միայն վարելահողից մոտ 4,5 դեսյատին։

Հողի հավասարար բաժանմամբ գյուղական համայնքների ներսում նախկինում եղած հողատիրապետման հակադիր բևեռները ջնջվում են և առերևույթ տեղի է ունենում «համատարած միջակացում»։

Իհարկե, սա չէր նշանակում, թե հողի հավասարար բաժանմամբ, իրենց սոցիալ-տնտեսական դրությամբ բոլոր գյուղացիները հավասարվում, դառնում էին միջակներ։ Սոցիալ-տնտեսական տարբերությունները (չքավոր, միջակ, կուլակ) դեռևս պահպանվում էին։

1920-ական թվականներին չքավոր գյուղացիությունն ապահովվելով հողաբաժնով և ստանալով սովետական իշխանության համակողմանի նյութական օգնությունն ու աջակցությունը, սկսում է տնտեսապես կազդուրվել և մոտենալ միջակի մակարդակին։

Ահա այդ բարենպաստ օբյեկտիվ պայմաններում էր, որ սովետական գյուղացիությունը, հակառակ կապիտալիստականի, գնալով միջականում էր և դառնում գյուղի կենտրոնական դեմքը, ինչպես իր մենագրության մեջ ճիշտ նշում է Վ. Ղազախեցյանը։

Մի՞թե կարելի է բացատրել այն ճշմարտությունը, որ Հայաստանում ևս չքավոր գյուղացիների առավել գիտակից խավերը 1920-ական թվականների վերջերից (1927, 1928, 1929 թթ.) հիասթափվելով հողի «հավասարարությունից», հեռանում են հողի համայնական բաժանման ձևից և սկսում անցնել հողի սոցիալիստական օգտագործման եղանակին՝ կազմակերպում են կոլտնտեսություններ։ Իսկ Վ. Ղազախեցյանը գրում է, որ Հայաստանում աշխատավոր գյուղացիները 1929 թ. հետո է, որ «հիասթափվելով և հրաժարվելով «հավասարարությունից» ու համայնական հողօգտագործումից, աստիճանաբար սկսում են անցնել սոցիալիստական հողօգտագործմանը[37]։ Իսկ ի՞նչ անուն տանք, ինչպե՞ս գնահատենք 1927—1929 թթ. կազմակերպված հողագործական կոլտնտեսություններին, որոնց մասին ինքը՝ մենագրության հեղինակը, գրում է. «Կոմունիստական կուսակցության 15-րդ համագումարի որոշումները լայն արձագանք գտան նաև Սովետական Հայաստանում։ Բազմաթիվ գյուղացիներ ցանկություն հայտնեցին կազմակերպել կոլեկտիվ տնտեսություն... 1928 թ. չքավորական ժողովներում և բատրակների կոնֆերանսներում ավելի շատ էր խոսվում կոլտնտեսությունների անհրաժեշտության մասին»[38]։

---

36 Նույն տեղում, էջ 21—22։
37 Նույն տեղում, էջ 23։
38 Նույն տեղում, էջ 374—375։

Ինչպես տեսնում ենք, այս հարցում ևս Վ. Ղազախեցյանն ընկել է հակասության մեջ։ Նա իր աշխատության 374—380 էջերում, փաստորեն մերժում է նույն աշխատության 22—23 էջերում ասածը։

Վ. Ղազախեցյանն առարկում է այն հետազոտողներին, որոնք սովետական ագրարային վերափոխումները բնութագրել են նաև որպես «ագրարային հեղափոխություն»։ Վ. Ի. Լենինը բազմիցս գրել ու խոսել է «ագրարային հեղափոխության» մասին։ Այսպես, օրինակ, 1906 թ. ՌՍԴԲԿ IV (միավորիչ) համագումարում քննադատելով իր հակառակորդներին, Վ. Ի. Լենինը ասում էր՝ «Մենք պետք է ուղղակի և որոշապես ասենք գյուղացուն, եթե դու ուզում ես ագրարային հեղափոխությունը հասցնել մինչև վերջ, ապա դու պետք է նմանապես մինչև վերջ հասցնես նաև քաղաքական հեղափոխությունը. առանց քաղաքական հեղափոխությունը մինչև վերջ հասցնելու չի լինի բոլորովին կամ՝ չի լինի քիչ թե շատ կայուն ագրարային հեղափոխություն»[39]։ Քաջ հայտնի է նաև, որ սովետների համառուսաստանյան II համագումարից հետո, որտեղ ընդունվել էր լենինյան հայտնի դեկրետը՝ հողի մասին, Վ. Ի. Լենինը 1917 թ. դեկտեմբերի 5-ին (նոյեմբերի 22-ին), ասում էր, որ հողը տալով գյուղացիներին, մենք կատարել ենք «ագրարային հեղափոխություն»[40]։ Այժմ Վ. Ղազախեցյանն առաջարկում է մոռացության տալ «ագրարային հեղափոխություն» հասկացությունն ու պահանջը և դրա փոխարեն շրջանառության մեջ դնել «ագրարային ռեֆորմ» կամ «ագրարային վերափոխումներ» արտահայտությունները»[41]։

Այո, երբ ամբողջությամբ վերցրած հանրագումարի ենք բերում ագրարային (հողային) հարցի լուծման համար աշխատավոր գյուղացիության տասնյակ տարիների համառ, զոհաբերություններով լի դասակարգային պայքարը կալվածատիրության ու կուլակության դեմ, երբ այդ պայքարը պսակվում է մեծագույն հաղթանակով, դա ոչ թե սոսկ «ռեֆորմ» է կամ «վերափոխում», այլ կատարյալ ագրարային հեղափոխություն՝ լինի դա թե՛ Սովետական Ռուսաստանում, թե՛ Սովետական Հայաստանում։

Մենք դեմ չենք օգտագործելու նաև «ագրարային ռեֆորմ», «ագրարային վերափոխումներ» արտահայտությունները։ Բայց դրանք իրենց բովանդակությամբ ու նշանակությամբ շատ ավելի նեղ են ու սահմանափակ, քան «ագրարային հեղափոխությունը»։

К ВОПРОСУ ОБ ОЦЕНКЕ АГРАРНЫХ ПРЕОБРАЗОВАНИЙ В СОВЕТСКОЙ АРМЕНИИ

ГАРСЕВАН ШАРОЯН

Резюме

Издательством АН Армянской ССР в 1975 г. была выпущена монография В. Н. Казахецяна «История крестьянства Советской Армении в 1920—1929 гг.». В своей ценной книге автор касается также вопросов,

39 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 10, էջ 315 (ընդգծումները մերն են—Գ. Շ.)։
40 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 26, էջ 418։
41 Վ. Ղազախեցյան, նշվ. աշխ., էջ 22։

относящихся к истории аграрных (земельных) преобразований в Советской Армении: ликвидации помещичьих землевладений, конфискации лишних земель кулаков и их передачи трудовым крестьянам, форм и способов уравнительного раздела земли между крестьянами, характера совокупностей аграрных (земельных) преобразований двадцатых годов в Советской Армении и т. д. Однако интерпретацию затронутых вопросов со стороны Казахецяна мы считаем неверной.